Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի տղաների խումբ (2 դասաժամ) և աղջիկների խումբ (1 դասաժամ), դասվարի (15 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ), ֆիզկուլտուրայի (22 դասաժամ), ինֆորմատիկայի (6 դասաժամ), ՆԶՊ–ի (1 հաստիք) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. օգոստոսի 9-ից մինչև օգոստոսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 13:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. օգոստոսի 29-ին՝ ժամը 10:00-ին**, **ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում**, հասցե՝ ք. Գյումրի, Շերամ 2 թաղամաս 2, 2ա/6:

Տեղեկությունների համար զանգահարել 094-000-339 հեռախոսահամարով: